ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

«Հաստատում եմ»
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
_____ Ռ. Սարգսյան
«03» 03.2025թ.

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՓԲԸ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

/ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ/

ԵՐԵՎԱՆ 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջում սովորող ուսանողների ներքին կարգապահական կանոնները:

1.2. Կարգը կազմելիս հիմք են ընդունվել «Կրթության մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը», «Ուսանողական նպաստի և կրթաթոշակի տրամադրման կարգը», «Ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը», «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», «ԲՈՒՀ-ում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը», «Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը», «Ուսանողներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի և ուսանողի պայմանագիրը, Քոլեջի կանոնադրությունը և դրանից բխող ներքին կանոնակարգերը:

2. ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ.

2.1. ստանալ գիտության, տեխնիկայի և մշակույթի, զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիք,

2.2. ըստ նախասիրությունների մասնակցել քոլեջում անցկացվող ուսանողական աշխատանքներին, խմբակների պարապմունքներին և առողջապահությանը վերաբերող հանձնաժողովներին,

2.3. մասնակցել ուսուցման որակը հավաստող գործընթացներին և գնահատել դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,

2.4. անվճար օգտվել քոլեջի գրադարանից, կաբինետ լաբորատորիաներից, ինտերնետ սրահներից,

2.5. ուսանողական կյանքին առնչվող հարցերի լուծման համար ստեղծել ուսանողական հասարակական կազմակերպություններ, ուսանողական խորհուրդ,

2.6. կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել կառավարման մարմինների աշխատանքներին,

2.7. մասնակցել կրթության բովանդակության ձևավորմանը, ծանոթանալ ուսումնական պլանին և անհատական ուսումնառության ծրագրին,

2.8. ստանալ տեղեկատվություն գնահատման չափանիշների վերաբերյալ,

2.9. ծանոթանալ քոլեջի կանոնադրությանը, իրենց իրավունքներին և պարտականություններին վերաբերող այլ իրավական փաստաթղթերին, ուսումնառության պայմանների վերաբերյալ քոլեջի հետ կնքել պայմանագիր,

2.10. սահմանված կարգով և ժամկետներում ընդհատել ուսումը, զորակոչվել բանակ, իսկ զորացրվելուց հետո ներկայացնել դիմում ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ («Ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգ»),

2.11. սահմանված կարգով սովորել նախասիրած մասնագիտությամբ ինչպես քոլեջում, այնպես էլ այլ ուսումնական հաստատությունում («Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգ», «ԲՈՒՀ-ում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգ», «Ուսանողների(ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգ»),

2.12. առկա ուսուցմամբ սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ստանալ արձակուրդ՝ուսումնական պլանով սահմանված չափով,

2.13. լիազոր մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական արձակուրդ՝ մեկ տարի ժամկետով (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի) («Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի ուսանողներին ակադեմիական արձակուրդ տալու կարգ),

2.14. օգտվել ուման տարեկան մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից («Ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգ»):

3. ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ

3.1. պահպանել քոլեջի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, բարձր պահել քոլեջի պատիվն ու հեղինակությունը,

3.2. հաճախել դասախոսություններին, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներին և մասնակցել փորձառություններին.

3.2.1. տեսական պարապմունքների ժամանակ ուսանողները պետք է ունենան սպիտակ բժշկական խալաթ, գլխաշոր-կալպակ և հերթափոխային կոշիկ:

3.2.2. Գործնական և պրակտիկ պարապմունքների ժամանակ բժշկական խալաթ (կամ երկարաթև բժշկական կոստյում) բժշկական գլխարկ-կալպակ, հերթափոխային կոշիկ (դիմակ և բժշկական ձեռնոցներ անհրաժեշտության դեպքում): Խալաթի երկարությունը մինչև ծնկները, թևերը երկար կամ ¾ չափի: Հերթափոխային կոշիկը (մասնագիտական բժշկական) առանց կրունկների կամ ցածր կրունկներով (անվտանգության տեխնիկայի պահպանման նպատակով):

3.2.3. Աղջիկների համար հագուստը կարող է լինել դասական ոճի տաբատ-բլուզ, բլուզ-կիսաշրջազգեստ կամ շրջազգեստ՝ երկարությունը մինչև ծնկները: Տղաների համար՝ տաբատ, ջինս դասական ձևով և վերնաշապիկ: Հագուստը միշտ պետք է լինի մաքուր, արդուկած և պատշաճ:

3.2.4. Նախնական զինվորական պատրաստության դասաժամերին ուսանողները պարտավոր են կրել զինվորական բլուզներ:

3.3. Սահմանված ժամկետում կատարել ուսումնական պլանով նախատեսված բեռնվածությունը, կատարել կրթական ծրագրերի պահանջները, հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին,

3.4. տիրապետել ապագա մասնագետին անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին,

3.5. խնամքով վերաբերվել քոլեջի սեփականությանը(գույք, գրքեր, ուսումնական ձեռնարկներ, սարքավորումներ և այլն): Քոլեջի սեփականություն համարվող գույքը վնասելու համար ուսանողը(կուրսը կամ ուսխորհուրդը) կրում է նյութական պատասխանատվություն գործող օրենսդրությամբ՝ վնասված գույքի վերականգնմամբ,

3.6. հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը.

3.7. վճարովի հիմունքներով սովորելիս՝ սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը,

3.8. բարձր պահել քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը,

3.9. պահպանել հասարակության բարոյական նորմերը,

3.10. լինել կոկիկ, կարգապահ և մաքրասեր: Քոլեջում պատշաճ մաքրությունը և կարգուկանոնը, սահմանված կանոններին համապատասխան, ապահովում են տեխնիկական աշխատակազմը և ինքնասպասարկման հիմունքներով՝ ուսանողները:

3.11. Ուսանողներին, առանց քոլեջի ղեկավարության թույլտվության, արգելվում է լաբորատորիաներից և ուսումնական շենքերից դուրս հանել տարբեր սարքավորումներ:

3.12. Զանգից հետո ուսանողի մուտքը լսարան, մինչև ընդմիջումը, առանց դասախոսի թույլտվության, արգելվում է: Քոլեջում դասի (զույգ ակադեմիական ժամի) տևողությունը սահմանվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ: Ուսումնական պարապմունքների սկզբի և ավարտի մասին դասախոսներն ու ուսանողները տեղեկացվում են զանգի ազդանշանով: Պարապմունքների ակադեմիական ժամի ավարտից հետո ընդմիջումը սահմանվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ

3.13. Չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, դրանց ընթացքում մտնել կամ դուրս գալ լսարանից: Պարապմունքների բնականոն անցկացման համար բոլոր ուսումնական և դրանց կից տարածքներում պետք է պահպանվի լռություն:

3.14. Յուրաքանչյուր ակադեմիական խմբում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից դասընկերներն ընտրում են ավագ:

Խմբի ավագն անմիջաբար ենթարկվում է ուսումնական մասին, իր խմբին տեղեկացնում է նրա բոլոր կարգադրությունների ու ցուցումների մասին:

Խմբի ավագի պարտականություններից են.

ա/ դասախոսի հանձնարարությամբ ուսանողների հաճախումների անհատական հաշվառումը:

բ/ ուսանողների չներկայանալու կամ ուշանալու մասին ուսումնական մաս ամնօրյա հաղորդում ներկայացնելը՝ նշելով ուշացման պատճառները

գ/ դասատախտակում կատարված փոփոխությունների մասին ուսանողներին տեղեկացնելը

դ/ ըստ հերթականության՝ խմբում ամեն օր հերթապահ նշանակելը

ե/ անորակ, ուսումնական պլանով նախատեսված ծրագրի խախտումով անցկացվող դասախոսությունների մասին ուսումնական մասին իրազեկելը:

Խմբի ավագի հանձնարարականների կատարումը, վերը նշված պարտականությունների սահմաններում, պարտադիր է խմբի բոլոր ուսանողների համար:

4. ՔՈԼԵՋԻ ՄԱՍՆԱՇԵՆՔՈՒՄ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է՝

4.1. Կարգապահությունը.

ա/ բարձր խոսելը և աղմկելը,

բ/ դասերից հետո լսարաններում անտեղի հավաքվելը,

գ/ դասերի ժամերին բջջային հեռախոսներով խոսելը,

դ/ ծխելը, արևաճաղիկ ուտելը:

Խախտումների դեպքում կիրառվում են կարգապահական տույժեր:

4.2. Քոլեջի ուսանողների խրախուսումը և կիրառվող կարգապահական տույժերը

4.2.1. Բարձր առաջադիմության, հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցության համար սահմանված են հետևյալ խրախուսանքները.

ա/ շնորհակալության հայտարարում

բ/ պատվոգրով պարգևատրում

գ/ նվերով պարգևատրում

դ/ դրամական պարգևատրում

Խրախուսանքի արժանանում են տնօրենի հրամանով: Այդ մասին տեղեկացվում է ուսանողությունը: Խրախուսանքի վերաբերյալ հրամանի քաղվածքը պահվում է ուսանողի անձնական գործում:

4.3. Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը

ա/բանավոր նախազգուշացում

բ/ նկատողություն

գ/ խիստ նկատողություն

դ/հեռացում քոլեջից

4.4. Այն ուսանողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլանով նախատեսված առաջադրանքները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ուսումնական գործընթացի ժամանակացույցը, քոլեջի՝ իրենց վերագրված, կանոնադրական դրույթները և ներքին կարգապահական կանոնները, տնօրենի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ քոլեջից հեռացում:

4.5. Ուսանողը հեռացվում կամ ազատվում է քոլեջից սահմանված կարգի համաձայն («Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջում ուսանողների հեռացման, ազատման կարգ)